ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---------- Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

27 մայիս 2025թ.

2025-05-27 16:28:51 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

AVANESYAN ANAHIT 7103810157 ---------- Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Подписано: AVANESYAN ANAHIT 7103810157
DN: cn=AVANESYAN ANAHIT 7103810157, c=AM
Дата: 2025.06.23 17:18:57 +04'00'

23 հունիս 2025թ.

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

NN ը/կ	ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԳՈՒՄԱՐԸ (հազ. դրամ)
1.	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ	8 792.0
	Գյումրի համայնքի այգիների և պուրակների հատվածներում կանաչ գոտու վերականգնում և ծառատունկ՝ օդի աղտոտվածության նվազեցման նպատակով	8 792.0
2.	ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ	0.0
ԸՆԴԱՄԵՆԸ՝		**8 792.0**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

ՀԱՅՏ 2026

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ

ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ 05.06.01

Գյումրի համայնքի այգիների և պուրակների հատվածներում կանաչ գոտու վերականգնում և ծառատունկ՝ օդի աղտոտվածության նվազեցման նպատակով

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Համայնքի նկարագրությունը.....3

Ծրագրի ընդհանուր նպատակը..... 5

Ծրագրի հիմնավորումը 7

Հավելված 1..... 8

ՀԱՄԱՅՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գյումրի համայնքի տարածքը 4429 հեկտար է:Համայնքի ռելիեֆը հարթավայրային է՝ ծածկված լճագետային և հրաբխային շուրջ350մ հզորությամբ նստվածքներով: Համայնքի տարածքն ակոսվում է Չերքեզի, Ջաջուռի,Գյումրի գետակի և այլ ձորերով: Ռելիեֆը հարթավայրային է՝ ծածկված լճագետային ևհրաբխային շուրջ 350մ հզորությամբ նստվածքներով:

Գյումրի քաղաքն ապրել է պատմական զարգացման տարբեր փուլեր և հարուստ էպատմամշակութային ժառանգությամբ:Քաղաքի կենտրոնական մասը, ինչպես նաև Ախուրյանի ձորը՝ որպես բնականլանդշաֆտի պահպանման տարածք, ընդգրկված են «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց-թանգարանի սահմաններում:«Մեծ Կումայրի» արգելոց-թանգարանը զբաղեցնում է շուրջ 1300 հա տարածք, որիտարածքում գտնվում է 1170 պատմամշակութային հուշարձան:

Գյումրու օդը կազդուրիչ է ու առողջարար, բուսականությունը տափաստանային է,գետահովիտներում աճում են ակացիա, թխկենի, հացենի և այլ ծառատեսակներ:

Համայնքը տարեկան ստանում է մոտ 2500 ժամ արեգակնային լույս և ջերմություն: Մեծ էհորդաբուխ աղբյուրների քանակը, որոնք միասին մեկ վայրկյանում տալիս են 1200 լիտրջուր:

Որոշ ջրային կառույցների վատ վիճակը, որոնք նախատեսված են մեղմելումիկրոկլիման, ամբողջացնելու համայնքի ճարտարապետական տեսքը և հանդիսանումեն համայնքի այցեքարտը: Գյումրու համայնքապետարանի հաշվեկշռում գտնվող 6ջրային կառույցներից 4-ը վերանորոգվել են և այժմ գործում են:

Համայնքի արևմտյան մասով հոսում է Հայաստանի Հանրապետության ջրառատ գետերից մեկը՝ Ախուրյանը: Գյումրին գտնվում է 8-9 բալանոց սեյսմիկ գոտում: Այստեղ 1840թ. հունիսի 20-ին, 1846թ. մարտի 22-ին, 1926թ. հոկտեմբերի 29-ին, 1988թ.դեկտեմբերի 7-ին տեղի են ունեցել աղետալի երկրաշարժեր՝ մարդկային մեծ զոհերով ևնյութական կորուստներով:

Շրջակայքը հարուստ է շինանյութերով՝ տուֆով, բազալտով, դիատոմիտով, կավով, սևահողային արգավանդ դաշտերով:Գյումրին իր անվանումը վերցրել է Ախուրյան գետի Գյումրիգետ վտակի անվանումից,որը հոսում է համայնքից ոչ հեռու:

Այս տեղանքում մարդիկ բնակվել են սկսած մ.թ.ա. VI դարից: Այս մասին հիշատակել էհին հույն պատմիչ Քսենոփոնը:

Հայկական մատենագրության մեջ Կումայրին (Գյումրու հնագույն անվանումն է)առաջին անգամ հիշատակվում է 773-775թթ.՝ արաբական տիրակալության դեմապստամբության հետ կապված: Միջին դարերում Կումայրին արդեն խոշոր բնակավայրէ եղել: 1804թ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ (1804-1813թթ.) Կումայրին մտելէ Ռուսաստանի կայսրության կազմի մեջ: 1837թ. քաղաքից ոչ հեռու հիմնադրվել էռուսական ամրոց, նույն թվականին Կումայրի է այցելել կայսր Նիկոլայ I-ը, և Կումայրինվերանվանվել է Ալեքսանդրապոլ՝ ի պատիվ կայսրուհի Ալեքսանդրայի:1840թ. Ալեքսանդրապոլը պաշտոնապես դարձել է քաղաք, իսկ 1850թ. դարձել էԷրիվանի գավառի Ալեքսանդրապոլի շրջանի կենտրոն: Լինելով սահմանային բերդքաղաք, Ալեքսանդրապոլը դարձել է առևտրի և արհեստների կարևոր կենտրոն, հայմշակույթի խոշորագույն կենտրոն Անդրկովկասում:

1899թ. Թիֆլիս-Ալեքսանդրապոլ, Ալեքսանդրապոլ-Երևան երկաթուղային գծիկառուցումից հետո, որը 1906թ. ձգվեց մինչև Ջուղա և հետո դեպի Թավրիզ,Ալեքսանդրապոլը դարձավ կարևոր երկաթուղային հանգույցներից մեկը: Դա շրջադարձային պահ է եղել քաղաքի սոցիալ-տնտեսական և մշակութայինկյանքում: Թիֆլիսից և Բաքվից հետո Ալեքսանդրապոլը համարվել է երրորդ ամենամեծև ամենակարևոր առևտրային կենտրոնը Կովկասում:

1924թ. Ալեքսանդրապոլը վերանվանվել է Լենինական, իսկ 1991թ. սկզբին՝ Կումայրի:

1991թ. սեպտեմբերի 21-ի Հայաստանի անկախության հռչակումից հետո քաղաքինվերադարձվեց իր պատմական անվանումը՝ Գյումրի: 2013թ.-ին Գյումրին ճանաչվել է «ԱՊՀ մշակութային մայրաքաղաք», իսկ 2016թ.-ին՝ «ՀՀ երիտասարդական մայրաքաղաք»:

Համայնքում հաշվառված բնակչության թիվը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ 157,454 է:

ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գյումրի համայնքը, որպես ազդակիր համայնք ՝ մասհանումներ է ստանում «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի /Շիրակ օդանավակայան/, «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Գյումրիֆիշ» ՍՊԸ-ի կողմից արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման, ջրային ռեսուրս վնասակար նյութերի և /կամ/ միացությունների արտահոսքերի և ընդերքօգտագործման թափոնների տեղադրման կամ պահման համար վճարվող բնապահպանական հարկերից:

Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի աղտոտման հետևանքով մարդու առողջության վրա վնասակար ազդեցությունները կարող են կանխվել կամ նվազեցվել բնապահպանական կառավարման պլանով՝ սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների և բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացման արդյունքում:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ԱՀԿ) կողմից հանրային առողջապահության հիմնարար ուղղություններ են սահմանվել բնակչության (հանրային) առողջության պահպանումը և հիվանդությունների կանխարգելումը: Հայաստանի Հանրապետության 15 տարեկան և ավելի բարձր տարիքիբնակչության շրջանում ֆիզիկական թերակտիվության (հիպոդինամիա) ցուցանիշըկազմում է 16,5 %[1]:

Ֆիզիկական ակտիվությունը ֆիզիկական և հոգեկան առողջության հզորմիջոց է: Սակայն շատերի առօրյա կյանքում ֆիզիկական ակտիվությունը բացակայում է,ինչը հանգեցնում է վերջիններիս առողջության համար ծանր

[1]Աղբյուրը՝ ՀՀ կառավարության նիստի արձանագրություն, բակային սպորտի զարգացման հայեցակարգ

հետևանքների:Ֆիզիկական պատրաստվածությունը ոչ միայն սպորտի և ֆիզիկականդաստիարակության, առողջության և առողջապահության կարևորագույն բաղկացուցիչմասն է, այլև համարվում է պետության սոցիալական քաղաքականությանկարևորագույն ուղղություններից մեկը:

Միջազգային առողջապահական կազմակերպությունների գնահատմամբ՝ առողջ

ապրելակերպի ձևավորումը հիվանդությունների կանխարգելման արդյունավետ և քիչ

ծախսատար միջոցներից է: Ավելին, առողջ ապրելակերպի ամրապնդմանն ուղղված միջոցառումները ազգաբնակչության առողջությանն ուղղված լավագույն ներդրումն են և, որպես արդյունք, դրականորեն են անդրադառնում երկրի տնտեսական բարեկեցության վրա:

Ներկայումս համայնքներից շատերում բնակչության ֆիզիկական ակտիվության հնարավորությունները չափազանց սահմանափակ են: Տեղական ինքնակառավարման մարմինները կարևոր դերակատարություն ունեն ակտիվ կենսակերպի համար պայմաններ ու հնարավորություններ ստեղծելու գործում:

Գյումրի համայնքն իր բյուջեի հնարավորությունների սահմաններում մշտապես աջակցում է մարզական կյանքի կազմակերպմանը, ֆիզիկական կուլտուրայի և առողջապրելակերպի խրախուսմանը:Հիմնական խոչընդոտներ են հանդիսանում՝մարզագույքի պակասը և մաշվածությունը, չափանիշներին չհամապատասխանողմարզումային և մրցումային դահլիճների բացակայությունը, մարզադպրոցներիշենքերի հիմնանորոգման անհրաժեշտությունը, բակային տարածքներումխաղահրապարակներում մարզասարքերի բացակայությունը,առողջ ապրելակերպի արմատավորման ոչ բավարար մակարդակը, բակայինտարածքներում խաղահրապարակների բացակայությունը: Այս խնդիրների լուծումըդժվարանում է համայնքի բյուջեի սղության պատճառով, որի հետևանքով կարող են նվազել հանրապետական և միջազգային մրցաշարերում բարձր մարզականցուցանիշները, ինչպես նաև կարող է պակասել ֆիզկուլտուրայով զբաղվողների թիվը:

Անկախ բոլոր խնդիրներից, սպորտային կյանքը Գյումրիում երբեք չի մարում: Նվիրված, անընդհատ աշխատող ու մեծ ձգտումներ ունեցող մարդիկ հասնում են իրենց նպատակին՝ դառնում են չեմպիոններ ու ապացուցում, որ սպորտում ամենակարևորը չհանձնվելն ու սեփական ուժերին հավատալն է:

Բնապահպանական հարկից մասհանվող գումարներով նախատեսում ենք իրականացնել Գյումրի համայնքի այգիների և պուրակների հատվածներում կանաչ գոտու վերականգնում և ծառատունկ՝ օդի աղտոտվածության նվազեցման նպատակով: Ծրագիրն ուղղված է Գյումրիի այն տարածքների կանաչապատմանը, որոնք վերջին տարիներին դարձել են բարձր օդային աղտոտվածության գոտիներ՝ տրանսպորտային հոսքերի, շինարարական փոշու և կենցաղային աղբի կուտակման հետևանքով: Նախատեսվում է իրականացնել թիրախային ծառատունկ համայնքի կենտրոնական և մարդաշատ հատվածներում՝ հատուկ ուշադրություն դարձնելով բակային և դպրոցների/մանկապարտեզների հարակից գոտիներին:

- Ծրագրի հիմնական գործողություններ
- Շրջանառվող փոշու չափաբերում՝ նախքան աշխատանքների իրականացումը
- 150-200 ծառի տնկում բարձր փոշի կլանող հատկություններ ունեցող տեսակներով (թեղի, բարդի, սոճի և այլն)
- Կաթիլային ոռոգման համակարգի ներդրում (անհրաժեշտության դեպքում)
- Տեղեկատվական վահանակների տեղադրում՝ էկոլոգիական կրթության նպատակով
- Մշտադիտարկման և պահպանման պլան համայնքային կառույցների հետ

ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Գյումրի քաղաքի տարածքում մթնոլորտային օդի փոշով աղտոտվածության վիճակի մասին պետական մոնիթորինգի տվյալներով 2024 թվականի ընթացքում փոշու օրական կոնցենտրացիան գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն 1.1-3.7 անգամ, 2025 թվականի մարտ ամսվա ընթացքում գերազանցել է ՍԹԿ-ն 1.1-2.0 անգամ: Այս ցուցանիշները փաստում են այն մասին, որ Գյումրին հանդիսանում է բարձր փոշիացածության գոտի, ինչը լրջորեն սպառնում է բնակչության առողջությանը: Փոշու փոքր մասնիկները (PM10, PM2.5) ներթափանցում են շնչուղիներ և առաջացնում շնչառական, սրտանոթային և ալերգիկ

հիվանդություններ: Հատկապես խոցելի են երեխաները, տարեցներն ու քրոնիկ հիվանդություններ ունեցող անձինք:

Ստեղծված իրավիճակում քաղաքային կանաչ տարածքների ընդլայնումը՝ որպես բնական ֆիլտրային համակարգ, հանդիսանում է մթնոլորտային օդի որակի բարելավման ամենաարդյունավետ և մատչելի միջոցներից: Ծառատունկը զգալիորեն նվազեցնում է փոշու պարունակությունը օդում, բարելավում է օդի խոնավությունը, կլանում է վնասակար գազեր և ստեղծում բարենպաստ միկրոկլիմա: Այդ իսկ պատճառով Գյումրիի կենտրոնական հատվածներում կանաչ գոտու վերականգնումը դիտվում է ոչ միայն որպես բնապահպանական, այլև հանրային առողջապահական առաջնահերթություն:

Ծրագրի հիմնական շահառուները՝ Գյումրիի բնակչությունը:Բնակիչներն ուղղակիորեն կօգտվեն մաքուր և բարելավված մթնոլորտային օդից, ինչը կնվազեցնի շնչառական և ալերգիկ հիվանդությունների տարածվածությունը, բարելավելով հանրային առողջության ընդհանուր ցուցանիշները:Ծառատունկը կիրականացվի նաև մանկապարտեզների, դպրոցների և այլ հանրային օբյեկտների հարակից տարածքներում՝ նպաստելով առավել խոցելի խմբերի՝ մաքուր օդով ապահովմանն ու անվտանգ շրջակա միջավայրի ձևավորմանը: Օդի աղտոտվածության նվազեցումը կարող է հանգեցնել առողջապահական ծախսերի կրճատման՝ կապված փոշու ներշնչմամբ պայմանավորված հիվանդությունների կանխարգելման և բուժման հետ:

Ծրագրի բյուջեն՝ Ընդհանուր բյուջեն ՝ 8792.0հազար ՀՀ դրամ:

Ծրագրի բյուջեի ֆինանսավորում՝ բնապահանական հարկից մասհանվող գումարներ, անհրաժեշտության դեպքում նաև համայնքային բյուջեից լրացուցիչ ներդրումներ՝ չնախատեսված աշխատանքների իրականացման համար:

.